Հաշվետվություն

ներդպրոցական վերահսկողության շրջանակներում կատարված աշխատանքների

2022-2023 ուսումնական տարի

Ուսումնադաստիարակչական գործընթացի կարևոր բաղադրիչը՝ ներդպրոցական վերահսկողությունը, ունի բնութագրող, վերափոխող, խթանող, ուսուցանող, զարգացնող և դաստիարակող նշանակություն, և նրա հաջող իրականացմամբ է պայմանավորված կրթական գործընթացի որակը:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են և՛ թեմատիկ, և՛ ֆրոնտալ վերահսկողության ձևերը: Վերահսկողության ձևերի ընտրությունը բխել է առաջադրված խնդիրների յուրահատկություններից: Թեմատիկ վերահսկողությունը իրականացվել է ողջ ուսումնական տարվա ընթացքում համակողմանի ուսումնասիրման և կառավարման որակի մասին տեղեկություն ստանալու նպատակով: Կազմվել են գրավոր արձանագրություններ, վերլուծություններ, քննարկումներ, տրվել է հետադարձ կապ:

Ֆրոնտալ վերահսկողություն է իրականացվել նաև մմ աշխատանքների նկատմամբ. ստուգվել են մմ գործունեությունը, մմ նախագահի աշխատանքի արդյունավետությունը, յուրաքանչյուր ուսուցչի աշխատանքը:

Հաճախականությունից ելնելով՝ իրականացրել ենք մուտքային և ամփոփիչ վերահսկողություն 10-րդ դասարաններում հայոց լեզու և մաթեմատիկա առարկաներից՝ գրավոր աշխատանքների ձևով:

Վերլուծություններից հետո արդյունքները քննարկվել են խորհրդակցություններում, մեթոդմիավորման նիստերում և այդ քննարկումների հիման վրա մշակվել են հանձնարարություններ, ընդունվել են որոշումներ, որոնք դարձել են հետագա աշխատանքների պլանավորման հիմք:

Հայոց լեզվի գրավոր աշխատանքների ամփոփիչ ստուգումից հետո դարձյալ կատարվել են ընդհանուր վերլուծություններ, դիտարկվել և առանձնացվել են թույլ տրված սխալները, որի արդյունքում եզրահանգվել է հետևյալը.

- Թույլ տրված սխալների մեջ գերակշիռ մաս են կազմել կետադրական սխալները, սակայն նկատելի է եղել որոշակի աճ. կետադրումը շատ աշակերտների կողմից կատարվել է մտածված և վերլուծաբար՝ պակասեցնելով սխալների քանակը:
- Կրճատվել են նաև ուղղագրական սխալների քանակը, թեև անսխալ աշխատանքների թիվը դեռևս ցածր տոկոս է կազմել:
- Բարելավվել են բառապաշարային (հոմանիշներ, հականիշներ) առաջադրանքների կատարման մակարդակը, սխալները բավական քիչ են եղել:
- Բավականին քիչ են եղել գոյականի քերականական կարգերին առնչվող առաջադրանքից թույլ տրված սխալները:

Գրավոր աշխատանքից հետո բոլոր դասարաններում ապահովվել է հետադարձ կապն աշակերտների հետ: Կատարվել են կրկնվող սխալների ընդհանրական վերլուծություններ, մասնավոր սխալների վերհանումներ: Սխալները բացատրվել են, գրառվել աշակերտների կողմից: Շարունակվում է դասերի ընթացքում ուղղագրական, բառապաշարային (նշվածները 10-րդ դասարանի ծրագրային նյութն են կազմում) աշխատանքներին զուգահեռ տարվել նաև քերականական կանոններին անդրադարձը:

Մաթեմատիկա առարկայի գրավոր աշխատանքների ստուգումից հետո դարձյալ կատարվել են ընդհանուր վերլուծություններ, դիտարկվել և առանձնացվել են թույլ տրված սխալները, որոնց արդյունքում եզրահանգվել է հետևյալը.

- թույլ տրված սխալների մեջ գերակշիռ մաս են կազմել երկրաչափության հարթաչափական խնդիրները, սակայն նկատելի է եղել որոշակի աճ. աշակերտները կարողացել են ներկայացնել խնդիրների գծագրերը, սակայն առկա են թերություններ լուծման գործընթացի քայլաշարում:

- կրճատվել են նաև հանրահաշվական սխալների քանակը, եղել են անսխալ աշխատանքներ:
- բարելավված էր հանրահաշվական վարժությունների լուծման ընթացակարգը, հստակ երևում էր քայլաշարը:
- լավ վիճակում էին հանրահաշվական վարժություններին վերաբերող վարժությունները, սակայն շատ էին բացթողումները երկրաչափությունից :
- գրավոր աշխատանքից հետո ևս բոլոր դասարաններում ապահովվել է հետադարձ կապն աշակերտների հետ: Կատարվել են կրկնվող սխալների ընդհանրական վերլուծություններ, մասնավոր սխալների վերհանումներ: Սխալները բացատրվել են, գրառվել աշակերտների կողմից:

Վերահսկողության նպատակով կատարված դասալսումները ցույց տվեցին, որ դեռևս ունենք հետևյալ բարելավման կողմերը.

- կիրառել ուսուցման արդյունավետությունը բարձացնող մեթոդներ
- ապահովել 21-րդ դարի աշակերտների կարիքներից բխող դասեր
- դասերը նպաստեն աշակերտների վերլուծական մտածողության զարգացմանը, թեմայի մատչելիության ապահովմանը, խնդրահարույց իրավիճակների լուծմանը
- հետադարձ կապի պարտադիր ապահովում, դասի կառուցվածքի հստակ սահմանում և ժամանակի կառավարում, գնահատման տարբեր ձևերի իրականացում
- տեխնոլոգիական միջոցների կիրառում՝ աշակերտների հետաքրքրասիրությունը բարձրացնելու նպատակով:

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալի կողմից կատարվել է էլեկտրոնային դասամատյանի ամենամսյա վերահսկողություն, կազմվել են արձանագրություններ, մշակվել թերությունների շտկման քայլերը:

Վերահսկողություն է իրականացվել նաև էլեկտրոնային ուսուցում իրականացնող ուսուցիչների աշխատանքի նկատմամբ: Վերահսկողությունն

հիմնականում իրականացվել է դասալսումների միջոցով, որոնց նպատակը եղել է հետևյալ.

- բոլո՞ր աշակերտներն են ներգրավված դասապրոցեսի մեջ,
- ուսուցիչը աշակերտներին անհատական մոտեցում ցուցաբերու՞մ է,
- աշակերտների ներգրավվածությունը և հետաքրքրությունը խթանելու համար ուսուցիչը կիրառու՞մ է բազմազան ռազմավարություններ, առցանց գործիքներ:
- ուսուցիչների կողմից դասավանդման մեթոդների ընտրությունը նպաստու՞մ է աշակերտակենտրոն ուսուցմանը: Առարկայական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են հանրակրթական ուսումնական հաստատությունների առարկայական ծրագրերին: